

# Ծիրան

Այգեգործ Ճատուրն այս տարի ծիրանի առատ բերք է ստացել: Նա ցանկանում է բերքը տեղափոխել մայրաքաղաք, որպեսզի հասցնի այն շուկա և պահածոների գործարաններ: Դրա համար նրան պետք են բեռնատարներ: Ճատուրը գտել է բեռնափոխադրման երկու կազմակերպություն: Առաջին կազմակերպությունը առաջարկում է մեքենաներ, որոնցից յուրաքանչյուրում տեղավորվում է  $n_1$  հատ ծիրանի արկղ, և տեղափոխումն իրականացնող մեկ մեքենայի համար պետք է վճարել  $c_1$  դրամ (անկախ մեքենայում արկղերի քանակից): Երկրորդ կազմակերպության մեկ մեքենայի մեջ տեղավորվում է  $n_2$  արկղ ծիրան, և պետք է վճարել  $c_2$  դրամ: Ճատուրը ցանկանում է տեղափոխել  $n$  արկղ ծիրան: Գրեք ծրագիր պարզելու համար, թե Ճատուրը առնվազն որքան գումար պետք է վճարի ծիրանը այգուց մայրաքաղաք տեղափոխելու համար:

## Մուտքային տվյալներ

Մուտքի առաջին և միակ տողում տրված են  $n, n_1, c_1, n_2, c_2$  բնական թվերը ( $1 \leq n, n_1, c_1, n_2, c_2 \leq 10^5$ ):

## Ելքային տվյալներ

Պետք է արտածել մեկ թիվ՝ ծիրանը տեղափոխելու համար մինիմալ անհրաժեշտ գումարը:

## Օրինակ

### Մուտք Ելք

10 3 7 6 4 8

10 3 7 4 8 22

## Բացատրություն

Առաջին օրինակում անհրաժեշտ է օգտվել երկրորդ կազմակերպությունից՝ վերցնելով 2 բեռնատար և ծախսելով  $2 \cdot 4 = 8$  դրամ: Երկրորդ օրինակում հարկավոր է վերցնել 2 բեռնատար առաջին կազմակերպությունից և 1 բեռնատար երկրորդ կազմակերպությունից՝ ծախսելով ընդհանուր  $2 \cdot 7 + 1 \cdot 8 = 22$  դրամ: